ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների իմքնուրույնությանն ու ստեղծագործական ակտիվությանն ուղղված մեթոդների արդյունավետ ընտրությունը

Կատարող՝ Վիկտորյա Աբաղյան

Առարկա՝ Հայոց լեզու և հայ գրականություն

Ուսումնական հաստատություն՝ «Հրազդանի Լ.Խեչոյանի անվան թիվ **10** ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀՐԱԶԴԱՆ **2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն_____ 3

2. Հետազոտության փորձարկումն ու ներդրումը_____ 5

3. Եզրակացություն _____21

4. Օգտագործված գրականություն _____ 22

5. (Հավելված 1, դասապլան 1):_____ 23

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

...Բոլոր մտածող էակները տարբեր են, բայց և նրանք բոլորն էլ
խորքում իրար նման են իրենց տրված
մտածելու հատկությամբ և ցանկություններով:

Վոլտեր «Միկրոմեգաս»

Ինչո՞ւ ընտրեցի «Սովորողների ինքնուրույնությանն ու ստեղծագործական ակտիվությանն ուղղված մեթոդների արդյունավետ ընտրությունը» թեման:

Գրավեց «ստեղծագործական» բառը:

Ինձ համար կարևոր են իմ աշակերտների հոգևոր դաստիարակությունը, նրանց աշխարհանանաչողությունը, ստեղծագործական միտումները, մտքի խորհրդավոր ծլարձակումը, որ հետո դառնում է արարում:

Ես սիրում եմ Օգյուստ Ռոդենի «Աստծո ձեռքը» քանդակը:

Աստված արարում է մարդուն. սա արարման աստվածաշնչյան պատումի հրաշալի մեկնությունն է:

Ստեղծել, տքնել, նեղշնչվել...

Ամենագեղեցիկ մտածումն անգամ արժեք չի ունենա, եթե չկա արարման ձգտումը: Եվ ոչ մի արարում հավերժ չի լինի, եթե ծնված չէ մարդու հանդեպ խորագույն սիրո մտածումից:

Իմ հետազոտական աշխատանքի նպատակը ցանկանում եմ ձևակերպել Վահան Տերյանի «Հոգևոր հայրենիք» հոդվածի մի քանի կարևորագույն մտքերով(սա ևս մեթոդ է).

ա) սովորեցնել աշակերտին, որ մայրենի լեզուն «կուլտուրայի ամենաճշգրիտ ու անսխալական նշանացույցն է, մարդու ամենահավատարիմ ու անդավաճան մխիթարիչն ու սփոփիչը՝ անխոս բնության, անբարբառ տիեզերքի առջև»,

բ) սովորեցնել, որ «մի Ռաֆֆի, մի Արծրունի, մի Նալբանդյան, մի Դուրյան նույնպես ասպետներ են, ինչպես կռվի դաշտում իրենց կյանքը զոհաբերած հերոսները: Անվերջ զրկանքների և վսեմ մի հավատի պայծառ պատկեր չէ՞ միթե մեր հոգևոր հայրենիքի ասպետ-զավակների կյանքը»,

գ) սովորեցնել, որ «քննեն իրենց սիրտը և նայեն, թե կա՞ արդյոք այնտեղ հավատ, որով պիտի կենդանանա մեր հոգևոր Հայաստանը»,

դ) սովորեցնել, որ «որոշ հետևողականություն գտնեն իրերի ընթացքում և որոշ տվյալներից անեն բոլոր եզրակացությունները, որ հնարավոր է անել. չէ՞ որ նյութական կորուստները կարելի է վերադարձնել, իսկ հոգևոր կորուստն անդառնալի է»:

Իմ նպատակն է ստեղծագործական մտածողությամբ և ինքնուրույնությամբ օժտված իմ աշակերտին հասկացնել, որ եթե նա հիրավի հավատում է ապագային, ապա իր հայացքը պիտի ուղղի իր ներսը, իր

հոգու խորքը՝ տեսնելու թե կա՞ արդյոք իր մեջ այն ամենը, որ կենդանություն է ներշնչում մեր նյութական հայրենիքին: Իսկ խնդիրս իմ հոգևոր և նյութական հայրենիքի համար տաղանդավոր մարդ դաստիարակելն է: Ինչպես ճշում է Վահան Տերյանը. «Տաղանդավոր գրողները գեղեցկացնում են գրականությունը, տաղանդավոր մարդիկ զարգացնում են կյանքը»: Այս հետազոտական աշխատանքը ինձ հնարավորություն տվեց վերանայելու իմ ուսուցչական գործունեությունը և փաստելու մի «պարզ ճշմարտություն» («Երջանկության մեխանիկա» ֆիլմից). կարելի է լինել հանճարեղ գրող, կոմպոզիտոր, մաթեմատիկոս և ապաշնորհ մարդ, կարելի է գիտության և արվեստի բնագավառում չունենալ ընդունակություններ, բայց լինել հանճարեղ մարդ: Ուրեմն, ավելի հստակ ձևակերպեմ իմ նպատակը. պետք է օգտվեմ բոլոր հնարավոր մեթոդներից, որոնք օգնում են աշխարհը աշխարհ պահող և աշխարհը գեղեցկացնող մարդ դաստիարակելուն:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԸ

> «Եթե տրամաբանական է բանտարկության մի տեսակը ներկայացնել մեկ ուրիշ տեսակի բանտարկությամբ, ապա նույնքան տրամաբանական է իրականում գոյություն ունեցող մի բան ներկայացնել գոյություն չունեցող մեկ այլ բանով»:
>
> Դանիել Դեֆո

Ամեն անգամ, երբ խոսում եմ ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերության մասին, հիշում եմ ֆրանսիացի գրող Ալբեր Քամյուի մի միտք:

«-Երկուսին գումարած երկու հավասար է չորսի ,-ասում է աշակերտը:

-Ո՛չ, երկուսին գումարած երկու հավասար է չորսի,- ուղղում է ուսուցիչը:

-Երկրագունդը կլոր է, -ասում է աշակերտը:

-Ո՛չ, երկրագունդը կլոր է, -ուղղում է ուսուցիչը:

Որովհետև ուսուցիչը միշտ ճիշտ է»:

Առաջ ես մտածում էի, որ սա ուսուցչի միահեծան իշխանությունն ու հեղինակությունը փաստող երկխոսություն է և շատ անգամ ինքնագոհ մեջբերում էի՝ սաստելու աշակերտներիս: Տարիների հետ եկավ փորձառությունը, և այս պարզ երկխոսության խորքում ավելի կարևոր բան նկատեցի, խորհուրդ, որ մինչ

այդ անհասանելի էր ինձ: Մի՞թե ուսուցչի՝ առաջին հայացքից անարդարացի դիտողության մեջ չկա աշակերտին ուղղված կոչ, մարտահրավեր. «Պայքարի՛ր քո ճշմարտության համար, ապացուցի՛ր, բողոքի՛ր, մի՛ համակերպվիր, հաստատո՛ւն եղիր քո համոզմունքներում»:

Այո՛, այսօր ես ինքս եմ իմ աշակերտներին տալիս ազատություն խորհելու, ըմբռնելու աշխարհի առեղծվածային ընթացքը, լույսի ու խավարի հակակշիռ ուժերի պայքարը, մեր նախնիների հնագույն օրենքները, նրանց ժամանակի խորհրդավորությունը, հավատամք-կարգակառույցը, ծեսերի հեռավոր խանդաղա-տանքն ու հուզումները:

Ես ուզում եմ ապրել մի հասարակությունում, որը ձևավորվել է բարոյական և

գեղագիտական արժանիքներ ունեցող անհատներից, որոնք չեն խորշում աշխատանքից, բարեկիրթ են և ունեն մարդկանց հետ հաղորդակցվելու փորձ:

Իմ դասավանդած առարկաները՝ հայոց լեզու և գրականություն, հնարավորություն են տալիս աշակերտների հետ հաղորդակցման առավել մտերիմ միջավայր ստեղծելու:

Հատկապես գրականության թեմաները, հեղինակների կենսապատումները, նրանց կերտած կերպարները լավագույն օրինակն են աշակերտի արժեհամակարգը ձևավորելու:

Ես չեմ ուզում գրել ուսուցման մեթոդների, դրանց առավելությունների, արդյունավետության, հնարավորությունների մասին, թե ո՛ր մեթոդը ինչ է ենթադրում կամ ինչի է միտված:

Մեթոդները բազմազան են: Ուսուցիչը կարող է ստեղծել խնդրահարույց իրավիճակներ՝ աշակերտի մտածողությունը զարգացնելու, հմտություններ, հետաքրքրություններ, կարողություններ ձևավորելու համար: Մարդն իր շրջապատող միջավայրն ընկալում է 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը աչքերն են կատարում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ:Հենց «մեթոդ» բառն էլ, որ փոխառված է հունարենից, նշանակում է ճանապարհ դեպի հետազոտություններ կամ գիտելիքներ: Մեթոդը հնար է կամ միջոց, որն ուղղված է նյութի ուսումնասիրության, այսինքն՝ նպատակին հասնելու միջոց է, եղանակ և ուղի:

Մեթոդը շատ հաճախ ծնվում է դասապրոցեսում. ստեղծված միջավայրը, աշակերտների զարգացվածության աստիճանը, նրանց աշխարհահանաչողությունն ու երևակայությունը, պատրաստակամությունն ու հետաքրքասիրությունը (դասարան կա ուղեղ է, դասարան կա հոգի է) կարող են նպաստել նորանոր մեթոդների ստեղծմանը, ինչպես որ արդյունավետ ընտրված մեթոդը կարող է նպաստել աշակերտի ինքնուրույնությանն ու ստեղծագործական ակտիվությանը:

Օրինակ՝ XII դասարանում հայոց լեզվի ժամին գարնանային տեղատարափ սկսվեց: Կարծես երկինքը պատռվեց, ու երկնային ջրերը անզուսպ կատաղությամբ գահավիժեցին՝ ազդարարելով իրենց ազատությունը: Հանձնարարեցի աշակերտներին վայր դնել գրիչները, մի պահ ունկնդրել բնության տարերքին, հետո գրել փոքրիկ շարադրանք՝ «Ջրույց անձրևի հետ»:

Այնքա՜ն հետաքրքիր մտքեր էին ծնվել, այնքա՜ն պատկերներ, հույզեր: Ահա մի հատված իմ աշակերտուհու շարադրությունից.

«Երազում տեսա, թե թռչում էի
Անծիր ու անհուն ծովի վրայով,
Ճչում էր հոգիս երջանկությունից,
Իսկ սիրտս՝ տնքում կարոտից մի խուլ:
Բայց հանկարծ սիրտս պայթեց կարոտից,
Ու բեկորները խելագար կրքով
Թռան դեպի քեզ, իմ ցամա՛ք, իմ ա՛փ,
Ինձ անվերջ կանչող, իմ հողակտո՛ր: »

Զգիտեմ՝ ինչ անուն տամ այս մեթոդին, բայց արդյունքը գեղեցիկ է:

Ավագ դպրոցը աշակերտների հնարավորությունները, նրանց հոգեբանական նկարագիրը ուսումնասիրելու լայն ասպարեզ է բացում: Ամեն տարի ձևավորվում են դասարաններ տարբեր դպրոցներում, ընտանիքներում կրթություն և դաստիարակություն ստացած, արդեն որոշակի աշխարհայացք ձևավորված աշակերտներից:

Մեկը սիրում է կարդալ, մյուսը՝ խոսել, մեկը զգայուն է, մյուսը փորձում է սառնասիրտ երևալ, մեկը հարտար լեզու ունի, մյուսը լռակյաց է:

Ուրեմն որքա՜ն բազմազան պիտի լինեն մեթոդները:

XI դասարանում Թումանյանի «Գիքորը» պատմվածքի այուժեն ներկայացնում է բարեկեցիկ ընտանիքի սիրված, փայփայված մի տղա: Սկսում է խնդմնդալով.

– Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել...

Հազիվ է զսպում խնդուքը: Աչքի պոչով նայում է ընկերներին, սպասում է խրախուսանքի...

Ի՞նչ անել, ի՞նչ մեթոդ ընտրել մարդու մեջ խիղճ, կարեկցանք, սրտացավություն դաստիարակելու համար:

Զգիտեմ՝ որքանով է մանկավարժության տեսանկյունից ճիշտ իմ ընտրած մեթոդը, բայց արդյունքը երևաց (Թումանյանի Գիքորը արժանի չէր իմ աշակերտի հեգնանքին): Ասացի. «Ես ուրախ եմ, Արա՛, որ ձեր ընտանիքում վեճ ու կռիվ չկա, որ հայրդ ստիպված, կարիքից դրդված քեզ չի տանում մի բազազ

արտեմի դուռը՝ ծառայության, իսկ մայրդ չի ընկնում հորդ ոտքերը, թե՝ «Չեմ ուզում, իմ քորփա երեխին էն անիրավ աշխարհը մի գցիլ, չեմ ուզում» :

Այս միջադեպից առաջ որդիս մի տեսանյութ էր ցույց տվել ինձ տավուշցի տասներկուամյա մի տղայի մասին, որ հայր չուներ և ընտանիքի հոգսը վտիտ ուսերին առած՝ տղամարդուն վայել տիրություն էր անում տատին, մորը, մանկահասակ քույր-եղբայրներին: Ինչո՞վ Գիքոր չէր...

Խոսքս ավելի ազդեցիկ դարձնելու համար ցուցադրեցի այդ տեսանյութը:

Աշակերտս կարմրեց...

Ես երկար եմ մտածել նրա վերաբերմունքի շուրջ, փորձել եմ հասկանալ՝ երբ, որ տարիքում է խաթարվում մարդու բարոյահոգեբանական նկարագիրը, երբ է մարդ անընկալունակ դառնում ուրիշի ցավին, որ տարիքում է պետք զբաղվել նրա զգացմունքների դաստիարակությամբ:

Ես ունեցել եմ բարդ դասարաններ, որտեղ լուրջ ձախողումներ եմ ունեցել, անգամ հուսահատության և սեփական ուժերի հանդեպ անվստահության դառը զգացումներ:

Այդպիսի մի դասարան տնտեսագիտական հոսքում էր՝ կազմված հիմնականում տղաներից: Գրականության ոչ մի թեմա չէր հետաքրքրում այս մարդկանց. բոլորը զբաղված էին լուրջ գործով՝ թվաբանությամբ: Տեղին է հիշել Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի՝ չորրորդ մոլորակի բնակչին՝ գործարարին, որ աստղեր էր հաշվում:

Այդ օրերին դիտեցի հոլիվուդյան հետաքրքիր ֆիլմ՝ հիմնված իրական փաստերի վրա: Կոչվում էր «Ազատության օրագիր գրողները»:

Հասարակության անբարենպաստ ընտանիքների (թմրամոլներ, հանցագործներ) երեխաներից ձևավորված դասարանը հանձնում են ուսուցչական պրակտիկան նոր սկսած երիտասարդ ուսուցչուհու: Մեծ ջանքերի շնորհիվ նրան հաջողվում է իր աշակերտներին համոզել, թե ամեն ինչ կորած չէ, դեռ կարելի է դուրս գալ հասարակության «հահճից», ապագայի հույսեր փայփայել, ձգտել, պայքարել: Հանձնարարելով կարդալ «Աննա Ֆրանկի օրագիրը» գիրքը՝ ուսուցչուհին ցույց է տալիս, որ մարդն անգամ անմարդկային պայմաններում սիրում է, երազում, անմահացնում մարդկային հույզերը:

Նրան հաջողվում է փոխել իր աշակերտների կարծրատիպերը, աշխարհայացքը, նրանց տալ ընտրելու իրավունք:

Ֆիլմի ավարտին անմիջապես հարց ծագեց. ինչո՞ւ երիտասարդ ուսուցչուհուն հաջողվեց փոխել բոլորի կողմից անհույս թվացող մարդկանց, դարձնել լավը, բարի, նպատակասլաց, իսկ ինձ չի հաջողվում: Մի՞թե միայն ճիշտ ընտրված գրքի (մեթոդի) ազդեցությունն էր:

Հանկարծ ամեն ինչ պարզ ու հասկանալի դարձավ. ֆիլմի հերոսուհին իր սաներին տվեց այն, ինչից նրանք զուրկ էին՝ մարդկային վերաբերմունք, հոգատարություն, վստահություն:

Իմ աշակերտները դրա կարիքը չունեին: Ուրեմն նրանց պետք է հետաքրքրել նրանով, ինչը նոր է իրենց համար, տալ ինքնուրույն գործելու, ստեղծելու, գյուտ անելու հնարավորություն: Թող գոչեն՝ Էվրիկա՛, և նեսվեն հետազոտելու այս անծայրածիր աշխարհը: Եթե օժտված են բնագիտամաթեմատիկական մտածողությամբ, թող ստեղծեն տեսաֆիլմեր նախընտրած հեղինակի, հերոսի մասին:

Այդպես մենք ստեղծեցինք Խ. Աբովյանին, Մ.Նալբանդյանին, Պ.Դուրյանին և Մոնթեին ու հայ վրիժառուներին նվիրված հետաքրքիր տեսահոլովակներ:

Անտարբեր աշակերտներից ձևավորվեցին հետաքրքրասերները:

Աշակերտի մեջ ստեղծագործական կարողություններ ձևավորելուն օգնում են ընթերցվող գրքերը, տեսաֆիլմերի միջոցով անցյալի մշակութային ժառանգությանը, ժամանակակից արվեստին, գրական երկերին, գրողների կենսագրությանն ու հասարակական գործունեությանը ծանոթանալը, թատրոն, պատկերասրահ, թանգարան հաճախելը, ուսուցողական նպատակով կազմակերպվող էքսկուրսիաները, երաժշտություն լսելը, նվագելը, նկարելը, պոեզիայի երեկոները, արդյունավետ կլինի նաև սեփական նախաձեռնությամբ գրքեր ստեղծելը:

Օրինակ՝ XII դասարանում Պ.Սևակի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրելիս արդեն ավանդույթ է դարձել Երևանի դրամատիկական թատրոնում «Անվերջ վերադարձ» ներկայացումը դիտելը:

Իսկ դասարանում կազմակերպվող ֆեստիվալը բացահայտում է աշակերտի՝ գրողի և իր ժամանակի բախումն զգալու, անհատի և հասարակության փոխհարաբերությունները բազմակողմանիորեն վերլուծելու, ինչպես նաև զգացմունքները կառավարելու ընդունակությունը:

Հոգեբանական բարդ իրավիճակներում հայտնված գրական կերպարները վերլուծելիս հաճախ դասը վերածում եմ դատավարության: Դասարանը բաժանվում է մի քանի խմբի՝ մեղադրող, արդարացնող, լինում են նաև ձեռնպահներ: Այսպիսի դասի ժամանակ ճանաչում եմ աշակերտի՝ գեղեցիկն ու նսեմը, վեհն ու անարգը, հերոսականն ու փոքրոգին, կոմիկականն և ողբերգականը ընկալելու կարողությունը:

Փաստ է, որ մարդ հիշում է իր կարդացածի տասը տոկոսը, լսածի քսան, տեսածի երեսուն, տեսածի և լսածի հիսուն տոկոսը, իր ասածի ութսուն տոկոսը և իննսուն տոկոսը, ինչի նա ինքն է հասել գործնական գործունեության մեջ:

Ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Բավականին արդյունավետ է ժամանակակից գրողի մեկ ստեղծագործության ֆեստիվալը:

Իմ դպրոցը կրում է արդի գրականության հրաշալի արձակագիր Լևոն Խեչոյանի անունը: Հենց նրա մի պատմվածքի («Հողի դողը») ֆեստիվալն էլ կազմակերպեցի XII դասարանի մի խումբ աշակերտների հետ: Հուրախություն ինձ՝ արձագանքեցին տղաները. նրանց գրավել էր Խեչոյանի անցած ուղին՝ ազատամարտիկ և մտավորական լինելը:

Պատմվածքը կարդացին ինքնուրույն. ես միայն ուղղորդում էի՝ ինչին ուշադրություն դարձնեն: Իմ աշակերտների պատրաստակամությունը հուզիչ էր. ամեն օր նորանոր առաջարկներ էին անում, հայթայթում լուսանկարներ, ընտրում տեսաֆիլմեր՝ նվիրված Լ.Խեչոյանին: Աշակերտներից մեկը զանգահարեց անգամ Խեչոյանի կնոջը և լրացուցիչ տեղեկություններ հավաքեց գրողի մասին: Համատեղ ուժերով գեղեցիկ ցուցապաստառ ձևավորեցին՝ ներկայացնելով գրողի՝ ասույթ դարձած մտքերը:

Ես հասկացա, որ համամարդկային արժեքների խորագույն գիտակ Խեչոյանը արմատ է գցել իմ սաների հոգում:

Իսկ որքա՜ն հետաքրքիր էին մտքերը, որոնք ծնվել էին նրանց հոգում պատմվածքը ընթերցելիս: Ե՞րբ, ո՞ր պահին է մարդ զգում հողի դողը, ո՞րն է հողի խորհուրդը (Անթեյ-Արշակ արքա, Իսահակյանի «Հայրենի հողը» լեգենդը, Սիամանթոյի «Հողին ձայնը» քերթվածքը): Պատմվածքում ի՞նչ խորհուրդ ունեն գույնը, ձայնը, հոտը, բառը:

Խորունկ հոգով մի աղջիկ ճշեց «Սերոբ» բառը, որը պատմվածքի վերջում վերածվել էր «սերովբեի». Սերոբը երկրում էր, սերովբեն՝ երկնքում, վերևի ու ներքևի, երկնքի ու երկրի հակադրություն կար վերափոխման մեջ, որ արտացոլում էր մարդու ողբերգությունը: Խորիմաստ էին հակադիր պատկերների վերլուծությունները՝ մենք-նրանք (Խեչոյանը չի գործածում «թշնամի», «հակառակորդ» կամ նման բառեր), գենք-եկեղեցի («...մենք գենքերը թողեցինք եկեղեցու դռանն ու մտանք եկեղեցի». Աստծո տանը պաշտպանված ենք), նրանց աղջիկը-ֆրանսուհի ժուռնալիստը:

Բացատրեցին «ներարկել» և «տալ» բայերի ոճական տարբերությունները: Հակադրությունների դաշտից մտան համեմատությունների դաշտ: Աշակերտուհիներից մեկը ճշեց ծարավ մարդկանց և ծարավ կենդանիների նմանությունը, երկուսի բնազդային կապվածությունը տարածքներին, մյուսը համեմատեց Խեչոյանին գերմանացի գրող Ռեմարկի հետ և Խեչոյանին անվանեց «հայ Ռեմարկ»: Մեկ ուրիշը պատմվածքը համեմատեց Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի հետ (Մեռած քաղաք-մեռած, լքված գյուղ, կենդանիների սպանդը՝ պատմվածքում, սատկած կատուն՝ պոեմում, ընկերների կարևորությունը և՛ պոեմում, և՛ պատմվածքում, պատերազմի զարհուրելի պատկերները, մարդկային նկարագրի աղճատումը): Մյուս մասնակիցները կարդացին պատերազմի «դեմքը» բացահայտող դրվագները և ընկերներին առաջարկեցին հետևյալ հարցը. «Եթե փորձենք կերպարավորել պատերազմը, ո՞ր հերոսի տեսքով կներկայացնենք՝ նրանց աղջկա՞, հայ հրամանատարի՞, որին թախծոտ սիրում էին իր զինակից ընկերները, թե՞ օտար ժուռնալիստի»: Պատասխանները բազմազան էին ու հիմնավորված: Մեկն ասաց՝ նրանց աղջկա, որովհետև խաղաղ օրերին տղամարդիկ այդպես չէին վարվի կնոջ հետ, մյուսն ասաց՝ օտար ժուռնալիստի, որ մարմնավորում է անտարբեր աշխարհը: Իսկ զինվորականի մասնագիտությունն ընտրած մի տղա էլ ճշեց հայ հրամանատարին, որ թույլ չտվեց ծարավ զինվորներին ջրհորից ջուր խմել՝ վախենալով, թե ջուրը թունավորված կլինի, և ինքն առաջինը խմեց...

Վերջում ամբողջացրին Խեչոյան մարդու, Խեչոյան գրողի, Խեչոյան կամավորի կերպարը հենց հեղինակի փիլիսոփայությամբ. «Հիմա գրողի խնդիրը հայրենիքի կառույցը անառիկ պահելու համար ոչ թե պաթետիկ ոճով հերոսական վեպեր գրելով զինվոր դաստիարակելու գործն է լինելու, այլ մեկ ազգի, մեկ պետության ոչնչանալը երկրագնդի կործանում համարելը:

Գրականությունը կարողանալու հնարավորություն է պատերազմն ատել տալու՝ առանց ճշանակության, թե ում, որ երկրի, որ գերտերության պատերազմն է. այս մոլորակի, այս մարդու ճանապարհն անցնում է այն երկրի միջով, որտեղ նրա բնակիչը տուն է կառուցում, պահում է իր արվեստագետին, իր գործարանները, իր կնոջը, իր զավակների , որ բորբ արևի տակ ծփում են ցորենի դաշտե՛րը, լճերում խայտում են ձկնե՛րը, առատությունից շունը կտուրին, խոտի դեզի տակ, կատուն պատուհանի գոգին է մեջքը ուռեցնելով ուրախանում, երբ զավակները ուսանում են ցնծությամբ, կույսը հրնվում է, գազօջախի կրակը չի մարում, և կյանքի օրհնությունն է թափվում մշտապես»:

Ներեցե՛ք, եթե մեջբերումը երկար է. խմբագրել չկարողացա: Մի՞թե մեր նպատակն էլ այսպիսի աշխարհում ապրելը չէ, հուզականորեն զարգացած, ստեղծագործական ունակություններով օժտված սերունդներ դաստիարակելը չէ...

Ես ուրախ եմ, որ հիշտ եմ ընտրել ստեղծագործությունը. այն արդիական է, մտածելու, որոնելու անսպառ պաշար ունի:

Խեչոյանին նվիրեցինք նաև միջոցառում:

Հղումը՝ https://www.youtube.com/watch?v=cnL_Fp-kSFU&t=33s

Ընդունելով աշխարհի մարտահրավերները, մեր ժողովրդի անվերջ կրկնվող պատմությունը՝ էլ ավելի պարտավորված եմ ինձ զգում մարդու, քաղաքացու դաստիարակության գործում: Ես ցանկանում եմ, որ իմ աշակերտը ըմբռնի մարդկային հոգու գեղեցկությունը, բարձր իդեալներին, հայրենիքին, հարազատ մարդկանց նվիրվածության վեհությունն ու ազնվությունը, հիանա մարդով, նրա բարոյական գեղեցկությամբ ու վեհությամբ:

Այս ամենով հանդերձ՝ նա պետք է կարողանա ինքնուրույն որոշում կայացնել, գիտակցել ազատությունը, պատասխանատվությունը:

Հիշում եմ՝ աշնան մի օր մտա դասարան և անակնկալի եկա: Ամբողջ դասարանը ոսկեբույր այգի է հիշեցնում. նստարաններին, հատակին, պատուհանագոգերին թափված էին դեղին տերևներ...Ու մինչ ուշքի կգայի, աշակերտներս, մեկը մյուսին հետևելով, Տերյանի բանաստեղծությունները արտասանեցին...

Ո՞վ էր նրանց հուշել, ո՞ւմ մտքով էր անցել...

Նրանք դա արել էին ինքնուրույն:

Ես ոչ մի մեթոդ չէի կիրառել, այդ նրանք ինձ սովորեցրին նոր մեթոդ, որ ես անվանեցի «Աշնանաբույր»:

Ինչպես մանկության տարիներին լինում են արարքներ, որոնք մարդ հիշում է ամբողջ կյանքում, այնպես էլ ուսուցչի գործունեության ընթացքում պատահում են դեպքեր, որոնք խորհրդածելու առիթ են տալիս: Ես չեմ ամաչում իմ սխալն ընդունելուց, ես ինձ նսեմացած չեմ զգում իմ աշակերտներից ներողություն խնդրելիս:

Այսպես ես հասկացնում եմ նրան, որ ես էլ մարդ եմ, կարող եմ սխալվել, կարող եմ նույնիսկ անարդար լինել որևէ իրավիճակում, բայց գիտակցությունը, դաստիարակությունը ուղղորդում են ինձ, հուշում անելիքս:

«Մեռելահարցուկ» վեպում Մ.Նալբանդյանը գրում է. «Այնտեղ, ուր չկա կրթություն ու դաստիարակություն, չէ կարող լինել ընկերական կյանք, իսկ ուր չկա ընկերական կյանք, այնտեղ թագավորում է միմյանցից բաժանող և հեռացնող եսական սկզբունքը, որի հիմքի վրա ոչ մի բան չի շինվում, այլ հառաջուց շինվածքները ևս քանդվում են»:

Նա, ով չի աշխատում ինքնուրույն, երբեք չի գնահատի ուրիշի աշխատանքը:
Զմռան մի օր դպրոցի բակում բավականին հետաքրքիր ձնեպաղ և ձնետատ տեսա: Հմտորեն ստեղծված ձյունե կերպարները անմեղ ուրախության զգացում պարգևեցին: Ինչ-որ մեկի ստեղծագործ միտքը հրաշք էր արարել: Բարձր տրամաբանությամբ դպրոց մտա, իսկ դասերի ավարտից հետո անհամբերությամբ դուրս եկա՝ կրկին վայելելու վերազտած մանկության հրճվանքը:

Որքա՜ն մեծ եղավ հիասթափությունս, երբ բակում տեսա բարբարոսաբար ոչնչացված, կոխոտված ձնեմարդկանց:

Եվ սա ավագ դպրոցում, որի սանը այլ մտահոգություն պիտի ունենար, քան ձնեմարդ ոչնչացնելը: Այն միտքը, որ դա կարող է իմ աշակերտը արած լինել, անհանգստացրեց ինձ: Ուրեմն ինչ-որ բանում թերացել եմ ես, չեմ բացատրել, զրույց չեմ վարել իմ աշակերտի գաղափարական հասունությունը ձևավորելու ուղղությամբ, նրա համար իդեալ չեմ ստեղծել, իր նմանի աշխատանքի հանդեպ հարգանք չեմ դաստիարակել:

Չինաստանի դպրոցներից մեկում աշակերտները դիտել են մի տեսանյութ, որը պատմում է իրենց ծնողների ծանրագույն աշխատանքի մասին: Բոլոր աշակերտները հուզվել են՝ տեսնելով, թե ինչ գնով են ծնողները ապահովում երեխաների կրթության իրավունքը: Ամբողջ կյանքի դաս է:

Հավատացած եմ, որ այդ աշակերտներից ոչ ոք չի համարձակվի թերագնահատել ուրիշի աշխատանքը: Երեխային ինքնուրույն աշխատել սովորեցնում են մանկուց: Նա պետք է սեփական ուժերին վստահ լինի, զգա, որ իր աշխատանքը գնահատվում է, հոգեբանորեն պատրաստ լինի աշխատանքի թերությունների վերաբերյալ դիտողությունն ընդունելուն, հետևություններ անի և վերջապես գիտակցի կատարած աշխատանքի կարևորությունը: Ինչպես նշեցի, ուսուցչի նպատակն է ձևավորել ինքնուրույն մտածողություն և ստեղծագործական կարողություններ ունեցող մարդու:

Ուրեմն պետք է հնարավորություն տալ աշակերտին խորապես ուսումնասիրելու տրված նյութը: Եթե դա գրական ստեղծագործություն է կամ արվեստի գործ, նա պետք է ամբողջական պատկերացում ունենա երկի ստեղծման ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների, արվեստի ուղղությունների, նշանավոր գործիչների մասին: Բազմակողմանիորեն ուսումնասիրված նյութի վերաբերյալ գիտելիքը կունենա խորք, բովանդակություն: Օրինակ՝ միջնադարի նշանավոր գործիչ, առակագիր Մ.Գոշի գործունեությունը ներկայացնելիս ճիշտ կլինի նախ՝ ուսումնասիրել XI-XII դարերի պատմական իրադարձությունների զարգացումները համաշխարհային պատմության համայնապատկերում, այնուհետև հայոց պատմության էջերում, կապ ստեղծել հասարակագիտության «Բարոյագիտություն» թեմայի հետ, որ հասկանալի լինեն առակի ժանրային առանձնահատկությունները, կարելի է ուսումնասիրել ժամանակակից օրենսգրքի մի քանի դրույթներ՝ հասկանալու Մ.Գոշի «Գիրք դատաստանի»-ն: Այսպիսով, Մ.Գոշը կընկալվի ոչ միայն հայ գրականության և իրավագիտության, այլև համաշխարհային մշակույթի գործիչ:

Գրականությունը սերտորեն կապված է դպրոցում ուսումնասիրվող բոլոր առարկաների հետ, որովհետև արտացոլում է կյանքն իր բազմաբովանդակ շերտերով:

Օրինակ՝ XII դասարանում ուսումնասիրում ենք Կ.Զարյանի՝ դեգերումներով լի կյանքը: Պատմական իրադարձություններին զուգահեռ քարտեզագրում ենք մեծ մտավորականի կյանքի ուղին՝ գավառական Շամախի, Փարիզ, Բելգիա, Ավստրիա, Վենետիկ, Կոստանդնուպոլիս, Խորհրդային Հայաստան, դարձյալ Փարիզ, Իսպանիա, ԱՄՆ...

Հ. Թումանյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծության տեղանունները հիշելու համար ուսումնասիրում ենք պատմական Հայաստանի քարտեզը, աշակերտները իրենք են գտնում «հայոց կերոնները՝ Մասիս , Սիփան, Թոնդուրեք, Արագած...»

Պատկերացրե՛ք՝ ինչ ընդգրկուն թեմա է դառնում... Նաև ուսումնասիրման, հետազոտման լայն հնարավորություն է բացվում աշակերտի համար: Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակն ուսումնասիրելիս անպայման դիտում ենք համանուն ֆիլմը: Աշակերտներն առավել լավ են մտապահում սյուժեն, կերպարները, երկխոսությունները, Մաթևոսյանի կենսափիլիսոփայությունն իր հերոսուհու շուրթերով:

Ստեղծագործական ունակությունների զարգացմանը նպաստում է դերասանների՝ Մաթևոսյանի հերոսներին կերպավորելու տաղանդը:

Ցուցադրությունը սովորողին երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևերով ծանոթացնելն է:

Պատկերազարդումը ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի անվան հիմքը անգլերեն «փոխազդեցություն» բառն է: Այսպես անվանում են ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ

հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավիճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս:

Ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է:

Ուսուցումը ևս նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է:

XI դասարանում ուսումնասիրում ենք Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» ծավալուն վեպը:

Ի՞նչ անել, ինչպե՞ս արդյունավետ կազմակերպել դասը, որպեսզի աշակերտը և՛ որոշակիորեն ծանոթանա վեպի գործողություններին, և՛ հերոսների հոգեբանական նկարագրին: Որոշեցի վեպից դուրս գրել 4 հատված, որոնք, իմ կարծիքով, պատկերացում կտան ստեղծագործության բովանդակության, Դեմիրճյանի ոճի, հերոսների հոգեբանության մասին: Դասարանը բաժանեցի 4 խմբի: Ամեն խմբի հանձնարարեցի առանձին առաջադրանքներ տրված հատվածների վերաբերյալ: Դասը վարեցի ԽԻԿ համակարգով(Հավելված 1, դասապլան 1):

Համագործակցային այսպիսի մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտներին ստեղծելու, իրար լսելու, դատելու, վերլուծելու, կարծիք արտահայտելու, ինչպես նաև տարբեր առարկաներից ստացած գիտելիքները ցուցադրելու միջավայր:

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում նկատել եմ, որ այն թեմաները, որոնք ուսուցանվել են տարաբնույթ մեթոդներով, առավել տպավորիչ են եղել:

Այսպես, Լևոն Շանթի «Հին աստվածներ» հրաշալի դրամայի ամենախորհրդավոր տեսարանը՝ Աբեղայի և Քողավորի երկխոսությունը, երբ ներկայացնում ենք դերերով, պատկերն ավելի համոզիչ է դառնում, այդպես նաև՝ Սարոյի և Անուշի երկխոսությունն աղբյուրի մոտ: Դասարանում միասին ընտրում ենք Աբեղա և Սեդա կամ Անուշ և Սարո ու փորձում ենք ստեղծել հանդիպման հոգեբանական պատկեր: Հատկապես տղաներն սկզբում ամաչելով, հետո ավելի անկաշկանդ կերպավորում են գրական հերոսներին ու արժանանում ընկերների գնահատականին:

Գ. Սունդուկյանի անվան ազգային թատրոնում «Հին աստվածներ» դրաման ենք դիտում, քննարկում դերասանների խաղը, սիմվոլիզմի առանձնահատկությունները:

«Անուշ» ֆիլմ-օպերայից հատվածներ ենք դիտում, աղջիկները երգում են «Ամպի տակից» երգը... Կարծում եմ՝ այսպիսի մեթոդները խթանում են աշակերտի ստեղծագործական կարողությունները:

Եթե դասարանում երգող աշակերտներ են լինում, բանաստեղծությունները երգ ենք դարձնում, երգում: Այսպես գեղեցիկ խաղիկներ դարձան Քուչակի հայրենները:

Կարող եմ վստահաբար ասել, որ երգի վերածված բանաստեղծությունն ավելի լավ են հիշում, իսկ նկարչական ունակություններով օժտված աշակերտների հետ բանաստեղծությունները գունազարդ պաստառների եմ վերածում:

Ցուցադրում եմ Դ. Վարուժանի «Հացին երգը» շարքի մի քանի պատկերազարդում:




Հետաքրքիր է աշխատել ստեղծագործական ունակություններ և ինքնուրույն մտածողություն ունեցող աշակերտների հետ: Ինքս էլ եմ սովորում, զարմանում, հիանում: Երբեմն դասն ամփոփելիս այնպիսի եզրահանգումներ են անում կամ կերպարը վերլուծելիս այնպիսի փաստարկներ են բերում, հիմնավորում նրա այս կամ այն արարքը, որ անակնկալի եմ գալիս:

Աշակերտի մեջ ինքնուրույնություն և ստեղծագործական կարողություններ ձևավորելու համար առաջին հերթին ես՝ որպես ուսուցիչ, պետք է ունենամ այդ ունակությունները, ես պիտի աշխատեմ այն մեթոդներով, որոնց տիրապետում եմ: Չեմ կարող փոխել ինչ-որ բան, եթե ես չեմ փոխվում: Հետաքրքրասեր, ակտիվ աշակերտն ստեղծում է աշխատանքային միջավայր, երբեմն փոխում իմ պատկերացումները, նոր տեսանկյունից դիտարկել տալիս ուսումնասիրվող նյութը:

Ուրեմն ինչո՞ւ չտալ աշակերտին ստեղծագործական բերկրանք:

Ես հաճախ եմ լսում նեյրոհոգեբան Տատյանա Զերնիգովսկայային: Ըստ նրա՝ ուղեղի գործունեությունը երիտասարդ պահելու համար պետք է կարդալ բարդ գրքեր, դիտել բարդ ֆիլմեր, լսել բարդ երաժշտություն:

Այս տեսությունը արդյո՞ք չի օգնի աշակերտին՝ դրսևորելու իր ամբողջ հոգևոր ներուժը, լուծելու առավել բարդ իմացական խնդիրներ, արագացնելու նրա զարգացումը. չէ՞ որ աշակերտից կպահանջվեն հավելյալ ջանքեր, իսկ ուսուցչին հնարավորություն կտրվի հանդես գալու խորհրդատուի դերում: Եթե աշակերտի առջև խնդիր չի դրվում լարելու ուժերը և հաղթահարելու դժվարությունները, ապա նրա զարգացումը դանդաղում է: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև սովորողի հոգեկան զարգացման անհատական բնութագիրը, ուսման նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Մենք հաճախ ենք լսում այս բնութագրումը. «Ընդունակ է, բայց ծույլ է»:

Պետք է բացատրենք աշակերտին, որ իմանալ և ոչինչ չանելը հավասարազոր է չիմանալուն, ինչպես կարողանալ և չանելը՝ չկարողանալուն...:

Այսպիսի դեպքերում ես ցուցադրում եմ տեսանյութ պարոլիպիական խաղերի մասնակիցների մասին, որոնք, հաղթահարելով հոգեբանական և ֆիզիկական բազմաթիվ դժվարություններ, ապրում են լիարժեք կյանքով, պայքարում են, հաղթում, հաստատում:

Ասեմ, որ այս մեթոդն արդյունք ունի. շատերը «չեմ կարողանում» պատասխանը տալուց առաջ մտածում են, և դա ճիշտ է: Ես միշտ ասում եմ. «Կատարի՛ր հանձնարարությունը քո ուժերի չափով, միայն մի՛ ասա՝ չեմ կարող»: Մենք չպետք է կանգնենք մեր որոնումների կես ճամփին:

Եթե գիտելիք ունենք, ուրեմն ունենք հնարավորություն՝ որոշելու՝ ինչ անենք և ինչու անենք: Եթե ունենք կարողություն, ուրեմն ունենք պատկերացում՝ ինչպես անենք: Եթե ունենք ցանկություն՝ մոտիվացիա, ունենք նաև անկարելին կարելի դարձնելու ուժ, կամք:

Այս երեք կոմպոնենտները՝ գիտելիք, հմտություն, մոտիվացիա, ձևավորում են մեր կարողությունները, որոնցով էլ բնութագրվում է մեր էությունը:

Կառուցողական, գիտական սկզբունքներով կազմակերպվող ուսուցումը ամենից առաջ աշակերտից պահանջում է մտավոր եռանդի մշտական դրսևորում, օգնում է ընդունելու, փոխանակելու, վերակառուցելու, յուրացնելու նոր գիտելիքներ, տեղեկություններ:

Ընդհանրացման են ենթարկվում և արդյունքում սովորողների գիտակցության մեջ առաջանում են նոր իմացական կառույցներ, որոնք դառնում են մտածողության «գործիքներ»՝ վերլուծություն, համեմատություն: Տեղի է ունենում սեփական գիտելիքի կառուցում: Լավ տուն կառուցելու համար պետք է լավ շինարար լինել, գեղեցիկ տուն կառուցելու համար՝ ճարտարապետ, ապահով և հարմարավետ տուն կառուցելու

համար պետք է հմտություն ունենալ, իսկ ավարտուն շենքին շունչ ու հոգի տալու համար պետք են սեր և նվիրում:

Հայոց լեզվի հիմնական միավորները նշելիս՝ հնչյուն, բառ, նախադասություն, տեքստ, միշտ շինարար եմ դառնում. հնչյունը շաղախն է, բառը՝ քարը, նախադասությունը՝ որմը, տեքստը՝ տունը:

Աշակերտներիս հարցնում եմ՝ ուզո՞ւմ են՝ իրենց տունն ամուր հիմք ունենա, գեղեցիկ ու հարմարավետ լինի:

Պատասխանն արդեն գիտեք: Ի՞նչ է պետք այդպիսի տուն կառուցելու համար: Իհարկե, գիտելիք, շինարարական հմտություններ, գեղագիտական ճաշակ:

«Այդպես պետք է կառուցել խոսքը»,– ասում եմ:

Հետո գրում եմ նախադասություններ՝ թույլ տալով բառագործական սխալներ, ու հարցում, թե շենքի որ քարն է թույլ կամ սխալ տեղադրված:

Օրինակ՝

1. Հայրենի անուրթներում (ակուր) ծուխը չի մարում:
2. Նա տարրական հասկացություն (հասկացողություն) չունի այդ թեմայի վերաբերյալ:
3. Այդ հարցը ինձ չի վերաբերվում (վերաբերում):

Հարցնում եմ, թե սխալ գործածված և դրանց փոխարինած բառերն ինչպիսի՞ բառեր են: Կարող ենք վերհիշել նախադասության անդամ հանդիսացող (նյութական) և չհանդիսացող (քերականական, վերաբերմունքային) խոսքի մասերը, հարստացնել մեր խոսքը՝ բառերին տալով ոճական նշանակություն:

Հետո տալիս եմ իմ աշակերտներին հնարավորություն՝ կառուցելու իրենց տեքստ–տունը:

Ա՛յ այստեղ թող օգտագործեն և՛ ստացած գիտելիքը, և՛ «շինարարական, ճարտարապետական հմտությունները , և՛ ստեղծագործական ունակությունները»:

Հետազոտականն աշխատանքս ուզում եմ ամփոփել ֆրանսիացի փիլիսոփա, լուսավորիչ Վոլտերի «Միկրոմեգաս» ստեղծագործության մի դրվագով:

«–Ես այքան էլ լավ չեմ հասկանում հունարենը,–ասաց հսկան:

– Ես նույնպես,– ասաց փիլիսոփա որդը:

– Ապա էլ ինչո՞ւ եք ձեր այդ Արիստոտելից ցիտում հունարեն:

–Դա արվում է նրա համար, որպեսզի ձգտենք, որքան հնարավոր է, լավ մեջբերել այն, ինչից ոչինչ չենք հասկանում, և այն էլ այնպիսի մի լեզվով, որն ամենից քիչ ենք հասկանում»:

Ասելիքս այն է, որ ամեն ինչ պարզության մեջ է գեղեցիկ: Ինչպիսի մեթոդների էլ տիրապետենք, գիտելիքների ինչպիսի պաշար էլ ունենանք, եթե չենք կարողանում այն մատչելի մատուցել, ուրեմն մենք ոչինչ չենք անում:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

XII դասարանում ընթերցեցի իմ հետազոտական աշխատանքի բնաբանը, որն ընտրել էի Դանիել Դեֆոյի մտքերից:

Նրանք ուշադիր լսեցին, հարցրին վերնագիրը և արեցին իրենց եզրակացությունը. «Եթե մարդ ինքնուրույն մտածողություն չունի, ապա կարելի է նրան համոզել, որ այն ամենը, ինչ գոյություն ունի, իրականում գոյություն չունի և հակառակը: Իսկ ինքնուրույն մտածողությամբ և ստեղծագործական ունակություններով օժտված մարդու համար բացվում են որոնումների նոր հորիզոններ»:

Կարծում եմ՝ սրանից լավ եզրակացություն, այն էլ՝ իմ աշակերտների մտորումներից ծնված, ես չէի անի: Հետևելով աշխարհում կատարվող իրադարձություններին և իմ փոքրիկ հայրենիքի անչափելի հոգսերին՝ հասկանում եմ, որ մարդկության թե՛ գիտատեխնիկական առաջընթացի, թե՛ բարոյական անկման, թե՛ հաղթանակի, թե՛ պարտության պատասխանատուն դպրոցն է. չէ՞ որ նա է մտավոր-հոգեկան կուլտուրայի ստեղծման ամենախոշոր գործոնը: Մի քանի սերնդի հոգևոր անկարգությունն ու փչացած բարքերը, ոչ ճիշտ ընտրված ուսումնական ծրագրերը, չափորոշիչները, դասավանդման մեթոդները բավական

են, որ զգալի վնաս հասցվի նաև գործնական կյանքին: «Եթե մտածողությունը կորցնի զգոնությունը և պարզությունը, իսկ ոգու հանդեպ հարգանքը կորցնի իր ուժը, շուտով կդադարեն ճիշտ ճանապարհով ընթանալ նավերն ու մեքենաները, կերերան և կհեղինակազրկվեն ինչպես ճարտարագետի ձեռքի հաշվեքանոնը, այնպես էլ բանկի և բորսայի մաթեմատիկան» (Հերման Հեսսե. «Հուլունքախաղ»):

Մեզանից յուրաքանչյուրը սոսկ մարդ է, սոսկ մի փոքր, ճանապարհ ընկած մի գոյություն, բայց նա պետք է գնա այն ուղղությամբ, որտեղ կատարելությունն է:

Նա պետք է ձգտի շարժվել դեպի կենտրոն, ոչ թե դեպի եզր:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Стивен Р.Кови ,,7 навыков высокоэффективных людей''.

2. Աշոտ Շահինյան –ԿԱՀ Արագածոտնի մասնաճյուղի մասնագետ . «Հայոց լեզու և գրականություն» 2013թ.

3. Վ.Ա. Սուխոմլինսկի . «Սիրտս նվիրում եմ երեխաներին»

**(**Հավելված **1,** դասապլան **1):**

Դասարանը՝ XI

Առարկան՝ Հայ գրականություն

Թեման՝ «Վարդանանք» վեպի գաղափարական բովանդակությունը

Նպատակը՝

ա. ուսուցանող – Ամբողջացնել V դարի պատմական նկարագիրը

բ. զարգացնող –Ստեղծել միջառարկայական կապ գրականության և պատմության, ռազմագիտության հայոց եկեղեցու պատմության միջև պատմական խոշոր իրադարձությունների միջոցով (Ավարայր, Սարդարապատ,Արցախ) վերլուծել հայ ժողովրդի պատմության շրջադարձային փուլերը:

գ. դաստիարակչական –Արժևորել հայ ժողովրդի անցած ուղին, հասկանալ սեփական անձի դերն ու նշանակությունը հայոց բարօրության գործում, նայել առաջ՝ հիշելով անցյալի էջերը:

Կառուցվածքը՝

Խթանում՝ Գ.Նժդեհի մտքերից (2 բ). «Բարոյապես սնանկ է անհատը, երբ նրան պակասում է հպարտության զգացումը՝ ծնունդն ազգային ինքնահանձնաչողության, որ սնվում է մեր պատմամնութից դեպի այն ամենը, ինչ գեղեցիկ է, վսեմ ու հերոսական հայրենի պատմության մեջ»:

Իմաստի ընկալում:

***I*** խումբ: Տեքստ ***I***

Ջրաղացի ուռենու տակ՝ մթության մեջ երկու ստվերներ՝ Արտակն ու Անահիտը, կանգնել էին իրար դեմ և հրաժեշտի զրույց էին առնում:

–Կհանդիպե՞նք իրար, իշխա՛ն, թե՞ վերջացավ...,–հարցրեց Անահիտը:

–Կհանդիպենք, Անահի՛տ,– պատասխանեց Արտակը:

Անահիտը չհարցրեց, թե երբ և որտեղ: Արտակն էլ չբացատրեց, թե ինչպես կլինի այդ, բայց երկուսն էլ հոգեկան ինչ–որ անդորր զգացին այդ պատասխանի մեջ: Արտակին այդ պահին տոգորել էր միայն մի խոր, անըմբռնելի, կարծես տարտամ, բայց միաժամ և ուժեղ զգացմունք –«մենք կհանդիպենք»: Եվ դա արդեն այլևս խոհ չէր, որին հաճախ դիմում էր նա և գիտակցորեն իմաստավորում: Ո՛չ: Սա չէր հանդուրժում այլևս ոչ մի խորհում, թույլ չէր տալիս տրակուսանք և կասկած: Սա գալիս էր մի հզոր, հերքին բանից, այնտեղից էր նաև իր սերը, իր ուրախությունը, հավատը, հույսը, աներկյուղությունը մահի: Մահը չի հաղթի նրան, նրան մահ չկա...

Հարցեր.

1. Նշել պատերազմի և սիրո հակադրություն արտահայտող տողեր, բառեր:
2. Նկարագրել պատերազմի նախօրեին հանդիպած հերոսների ապրումները ու խոհերը:
3. Վերհիշել նույնօրինակ դրվագները հայ գրականության էջերից:
4. Ինչպիսի՞ն կլինի այս հերոսների ճակատագիրը:

***II*** խումբ: Տեքստ ***II***

Ինչ–որ խլրտուք անցավ զորաբանակի շարքերի մի ծայրից մյուսը: Մի մեծ ջահ, լիզելով օդը ոսկի օձի նման և գալարվելով երկինք, մոտմոտեց դեպի զորաբանակը:

–Սպարապե՜տը... Սպարապե՜տը...,– հարվածեց շշունջը ծայրեծայր, և զորագնդերն ընդոստ ոտքի ելան:

Ջահի լույսով ողողված՝ գալիս էր Վարդանը, հետևից՝ նախարարները, Ղևոնդ Երեցը, կաթողիկոսը, Եղիշեն, Եզնիկը...

Զորագնդերը սթափ և զգոն նայեցին Վարդանին: Առաջ անցան ժողովրդական զորագնդերը: Փայլատակեց Եղիշեն՝ բոցավառ դեմքով, և խաղացկուն նժույգը ծառացնելով՝ թռավ դեպի բազմությունը.

–Ողջո՜ւյն զինվորելո՜ց, եղբարց իմ ի մահ, ի կյանս, զինվորյաց հայրենի ազատության: Պատրաստվեցեք հաղթության, վաղը ձեր ձեռքով պիտի մեռնի հայրենյաց մահը: Կռվեցե՛ք ի մահ, և թող օրհնյա՜լ լինի ձեր սուրն ազատության:

Առաջացավ Վարդանը.

–Զինվորնե՛ր, եղբայրնե՛ր, ժողովո՛ւրդ հայոց: Վաղը ազատության օրն է: Վաղը պիտի կռվենք: Եթե կան մեր մեջ թերահավատներ և վատեր, արձակեցեք՝ թող գնան մեզնից ի բաց: Իսկ քաջամարտիկները, որ պիտի մնան, աղաչում եմ և հրամայում եմ՝ եղբայրնե՛ր, քաջության հետ վատություն մի՛ խառնեք: Մի՛ նայեք թշնամու մեծության: Մենք կհաղթե՛նք: <u>Կհաղթենք մե՛նք, քանի որ ...</u>

Հարցեր.

1. Ավարտե՛լ ընդգծված միտքը:
2. Գրե՛լ ասույթներ քաջերի, քաջության մասին:
3. Բացատրել գրաբարյան նախդրավոր կառույցները:
4. Ընդգծե՛լ այն տողերը, որոնք բացահայտում են ժողովրդի վերաբերմունքը Վարդանի հանդեպ:

***III*** խումբ: Տեքստ ***III***

–Այս գիշեր և վաղը այլևս մենակ ենք այս վիթխարի ուժի առաջ: Որքան և դաժան է, բայց ասեմ ճշմարիտը: Բոլոր հնարքներից մե՛կն է միայն մեր ձեռքին՝ տալ թշնամուն անսպասելին: Այդ մտքով էլ գալիս էի ճանապարհին: Գազանին խոցել, ոչ սպանել: Այո՛, տիա՛բք, նրան սպանելը վեր է մեր ուժերից: Կարեվեր խոցումը հանկարծ, արագ, անհնարին ուժով: Խոցել նրան ի մահ այստեղ, քաշվել և գցել հետևը... Թող գա մեր հետևից արյունաքամվելով: Խոցումը կտանք միջոցից (կենտրոն), որտեղից նա չի սպասում: Կախվեցե՛ք թևերից այդ պահին ամեն զոհի գնով ու առաջ, ոչ հետ: Խոցվելուց հետո արդեն թշնամին կատաղած կընկնի մեզ վրա, և այստեղ է փորձությունն ու հանճարը. Սկիզբ դնել կանոնավոր, մաքիչ արյունաքամ նահանջի: Տոկացե՛ք: Թող ողջ Հայոց աշխարհը տոկա և կռվի այնուհետև շարունակաբար, անվերջ, լեռներում, կիրճերում, ամենուրեք: Ահա մեր վերջին փրկությունը, կասեմ՝ հաղթությունը: Հավատացե՛ք սրան:

Հարցեր.

1. Բացատրել Վարդանի ռազմավարությունը:
2. Հայոց եկեղեցու պատմության դասերից հիշել հայ զինվորականության վարքականոնը:
3. Փորձել քարտեզագրել Ավարայրի ճակատամարտի ռազմական գործողությունների քարտեզը:

4. Դարձյալ հայոց եկեղեցու պատմության դասագրքից վերհիշել օտարների գանահատակները հայ ժողովրդին:

***IV*** խումբ: Տեքստ ***IV***

... Վարդանը արագ նայեց Ատոմին, Համազասպին, Արշավիրին: Ո՛չ, չի կարելի նրանց զոհել վտանգի խաղին: Իսկ վտանգը ստույգ էր: Նայեց Զոհրակին (որդուն): Նրան կարող էր վտանգել: Ոչ ոք չի խորհի կշտամբել իրեն: Եվ նա դարձավ որդուն.

– Վերցրո՛ւ Մամիկոնյան զորագնդից մի ջոկատ, շտապի՛ր մյուս ափը և կա՛ց ցնոր հրաման:

–Սպարապե՛տ, խնայի՛ր,– դիմեց Արշավիրը:

–Լո՛ւռ,– սաստեց Վարդանը նրան անհասկանալի վրդովմունքով:

Զոհրակը, սաղավարտն ուղղելով, իջավ բլրակից և ցածում միամիտ և հավատող աչքերով մի անգամ վեր նայեց հորը, հեզ ժպտաց և սլացավ իր թիկնապահի հետ: Վարդանը նայեց նրա հետևից, և նրա սիրտը մրմռաց: Այդ ժպտի և հայացքի մեջ մի բան կար Զոհրակի մանկությունից: Կարծես մանուկ Զոհրակն էր, որին ուղարկեց մահի դեմ, և նա գնաց՝ չիմանալով այդ, միամիտ, վստահելով հոր անվտանգ տնօրինության: Վարդանը լավ էր հասկանում այդ. Իրոք, իր զավակին ուղարկում էր ստույգ մահվան:

Հարցեր.

1. Ո՞ւմ զոհեց Վարդանը հանուն հայրենիքի:
2. Հիշել հայրենի հողի զորության օրինակները հայ գրականությունից
3. Հիշել հայրերի և որդիների հարաբերությունը բացահայտող դրվագները հայ գրականությունից:
4. Բացատրել «ցնոր» բառի կազմությունը, նման օրինակներ հիշել:

Խմբերի պատասխանները լսելուց հետո ամփոփել դասը հետևյալ հարցով. «Ո՞րն է հայ ժողովրդի կենսունակության գաղտնիքը» և ավարտել միտքը.

ա. Պատմական Ավարայրը...

բ. Գեղարվեստական Ավարայրը...

գ. Ավարայրն իմ պատերացմամբ...

Տնային առաջադրանք:

Շարադրություն՝ «Պատմության քառուղիներում»: